անջատուելու յամառութեամբ և ինքզինքն ազգային թուէն պակսեցնէ։

Ուրիշ գիր. Ազարեան, ինչպէս նաև բոլոր կաթօլիկ մեր ազգայինք հարազատ հայ են, ի՞նչ հարկ կը բռնադատէ զիրենք Թըրքախօս լինել։ Որոյ արգիւնքն ուրիշ բան չը կրնար լինել բայց միայն նոր սերունդ մի պատրաստել որ բնաւ հայերէն չը հասկնայ, և հայերէն չը հասկանալով նոյն իսկ իւր եկեղեցին չը հասկնայ (քանի որ եկեղեցւոյ լեզուն հայերէն է և ոչ թըրքերէն)։ Եւ եկեղեցւոյ լեզուն չը հասկնալուն հետևանքն անհաւատութենէ ուրիշ ի՞նչ կրնայ լինել։ Հետևանք՝ որ հակառակ է բուն իսկ վատիկանի ոգւոյն, որ եկեղեցեաց լեզուները և ծէսերը անփոփոխ պահելու պատուէրներ տուած է. կ'երևի թէ՝ գեր. Ազարեան իւր այս հակազգային ընթացքով կը փափագի կոչուիլ Plus catholique que le pape։

(Արշալոյս Արարատեան)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 15 Նոյեմբերի

Ես ձեզ գրեցի արդէն մասնաւոր նամակով, որ ձեր համախոհները աշխատում են մի մի օրգան ունենալ հայոց դատի պաշտպան նոյնպէս փարիզ և Լօնդօն. այս մասին զանազան մարդկանց ձեռքով վաղուց արդէն բանակցութիւններ էին լինում. Հիմայ գրում են փարիզի մեր բարեկամ երիտասարդները. թէ մի առ մի բանակցելով բոլոր խմբագրութիւնների հետ, նոքա կանգնեցին միայն երկու խմբագրութեան վրայ, այն է «Union Republicaine» և «Justice» լրագիրների վրայ։ Թէ ինչ պայմաններով կարելի է իւրաքանչիւրը դոցանից ծառայեցնել արևելեան ազգերից մասնաւորապէս հայոց շահերին, այդ մասին շատ բաներ են գրում, որոնց գլխաւոր էութիւնը ի հարկէ դրամական օգնութեան մէջ է։ «Justice» օրինակ պահանջում է տասը հազար ֆրանկ մի տարւայ համար, խոստանալով այդ ժամանակ առանձին տեղ բաց անել յատկապէս հայոց հարցի համար։ Իսկ գալով «Union Republicaine» լրագրին, նորա պահանջները գուցէ շատ աւելի հեշտ լինէր լցուցանել, եթէ Կ. Պօլսի հայերը մարդ լինէին, այն է, կարողանային բարոյապէս թէ նիւթապէս շահել այդ լրագրի Կ. Պօլսի թղթակցի սիրտը, հաղորդելով նրան միշտ հարկաւոր տեղեկութիւններ և յատկապէս մատուցանելով նրան պարտաւորած մեծարանք, որովհետև այդ լրագիրը դրամի կարօտ մի խմբագրութիւն չէ, այլ մի և նոյն ժամանակ մեծ վստահութիւն ընծայող է իւր սեփական թղթակիցներին։ Բայց ո՞վ է նայողը այդ թղթակիցների վրայ, երբ նոքա իրանք կաղաչեն Աստուծոյ անունով իրանց շօշափելի և նոր նոր տեղեկութիւններ տալ Հայաստանի մէջ անցող գործերի վրայ։ Մինչդեռ Կ. Պօլսի տիրացուները բոլոր բեռը ձգած գրեթէ միայն մի երկու մարդիկների վրայ, իրանք զբաղուած են «Թէրջիմէնին» օրը մէկ պուղ խսփնուացինք և կեղտեր հաղորդելով իրանց արարքները քննադատողների և գեղծումները հարուածողների վրայ, վասնորոյ կը տեսնէք միայն մի երկու ձեզ յայտնի անձինք, որոնք էշի նահատակ դառած, ամեն գործի ետևից պիտի վազեն և ամեն տեղ հասնեն, քանի որ ուրիշները ոչինչ չեն անում։

Իսկ Լօնդօնի մէջ աշխատող միայն աշխոյժ և գործունեայ պ. Յակոբեանն է, որը պարբերաբար ազդու յօդուածներ է զետեղում «Times» ի մէջ հայոց մասին։ Թէպէտ այս ազնիւ երիտասարդը մեծ վստահութիւն և համարում է վայելում «Թայմսի» խմբագրութեան կողմից, բայց ինքը նիւթապէս շատ նեղված է, ասում են, և Մանչէստրի վաճառական հայերն էլ մեծ մասամբ լինելով լոկ նիւսիս հայեր, ոչինչով չեն օգնում խեղճ երիտասարդին։ Բայց որչափ էլ մեծ ազդեցութիւն ունենայ «Times» ը. գործնական նորա պրօգրամը այնչափ մեծ է և ընդարձակ, որ հայոց հարցին նուիրելի սիւնակները շատ նեղ և սահմանափակ կը լինեն, վասնորոյ լաւ կը լինէր, եթէ լինէր աւելի փոքր լրագիր աւելի նեղ քաղաքական պրօգրամով, քան թէ «Թայմսը»։ Այդպիսի լրագիր, որը պիտի պարապէր միայն Անգլիայի արևելեան շահերով այս օրերս հիմնվելու վրայ է։ Նորա խմբագիրը կը լինի «Թայմզի» և «Standart»-ի նախկին թղթակից պ. Ֆէյրման, որը մօտ տասը տարի արևելքումն է ապրել և քաջ ուսումնասիրել արևելեան հարցը իւր մանրամասնութիւնների մէջ։ Որովհետև այս օրերս պատրաստվում էր մեկնել դէպի Անգլիա, վասն որոյ ինձ յաջողվեց տեսակցել պ. Ֆէյրմանի հետ։ Նորա լրագիրը կը լինի անգլիերէն և ֆրանսերէն «Gazette Orientale» անունով։ Պ. Ֆէյրմանը մեծ յօժարակամութիւն ցոյց տուաւ հայոց հարցին նոյնպէս ընդարձակ տեղ տալ, ինչպէս «Journal d'Orient»ը եթէ միայն որչափ և իցէ քաջալերութիւն գտնէ հայոց ազգից բաժանորդագրութեանց մէջ։ Ի՞նչ զարմանալի բան է, որ մի օտար լրագիր նիւթական քաջալերութիւն է պահանջում հայերից, երբ նոյն իսկ հայոց թերթեր (այն էլ իրանց «բուն հայ» առողներ) իրանց ամբողջ կեանքի մէջ ոչ մի տող չը գրեցին, առանց աչքի տակ ունենալու իրանց գրպանի շահերը չը նայելով որ այդ հայ թերթերը միշտ խաբած են և յիմարի տեղ դրած հայ ժողովուրդը, ձեռնալով նորա առաջ «կրօնի և սկզբունքի» և այլն պաշտպան։ Թէ ինչպէս սկզբունքի պաշտպան են, տեսնում ենք նոցա բուն նիւթական շահերից։

Կարծեմ որ պ. Ֆէյրման ձեզ ևս գրեց իւր լրագրի մասին, խոստանալով մի և նոյն ժամանակ միշտ բարեկամաբար վերաբերվել մեր ազգութեան շահերին։ Վասնորոյ տարակոյս չը կայ, որ «Gazette Orientale»-ը եթէ բաժանորդ ունենայ Ռուսաստան, նոյնչափ հեշտութեամբ մուտք կը գտնէ այնտեղ, ինչպէս և «Journal d'Orient» ը։ A propos. եթէ գտնվում են հիմայ ուրիշ լրագիրներ ևս, որոնք ուշադրութիւն են դարձնում հայոց դատին պաշտպան կանգնելու կարևորութեան վրայ. դորանով մենք պարտական ենք գլխաւորապէս «Journal d'Orient»-ի գցած աղմուկին հայոց ազգի մասին, որով յիշեալ լրագիրը համայն Եւրոպայի առաջ մեծ հռչակ և նշանակութիւն է տալիս Թիւրքաց հայերին, խօսելով նրանց մասին հաւասարապէս յոյներին, սերբերին, բուլղարներին և ղարադաղցիներին, որոնց շահերը ևս շօշափում է նա։ Մի՞թէ քիչ բան է հենց այսպիսի մի զարկ տալը հայոց ազգի նշանակութեան, միաք ներշնչելով ուրիշներին, թէ այս ազգը աւելի կենդանութիւն և կորով է ցոյց տալիս իւրան վերաբերեալ դատի մէջ, քան թէ ուրիշները. այստեղ ի հարկէ ռուսահայոց օգնութիւնը ևս մեծ նշանակութիւն է առնում, քանի որ տաճկահայոց թըկունքը այդչափ ապահովված է իրանց ռուսահայ եղբայրների մասնակցութեամբ...

Այսպիսով տեսնում էք, որ ամեն կենտրոններում շարժում և ջանք կայ որ և իցէ կերպով ուժովացնել պրօպօգանդան հայոց մասին օտար լրագիրների միջոցով, միայն Ս. Պետերբուրգի և Մօսկվայի մօտ 300 հայ ուսանողներն են, որոնք մնում են ընկղմած իրանց մտաւոր թմրութեան մէջ։

Ստանալով այդչափ հայ լրագիրներ, այդչափ տեղեկութիւններ Կովկասից կամ ուրիշ տեղերից, մտածո՞ւմ են նոքա արդեօք առանձին յօդուածների կամ փոքրիկ բրօշիւրների ձեռով ամփոփել նոցա և տարածել հայոց հարցին օ և է աջակցութիւն ունեցող և մեզ հարկաւոր շրջանների մէջ։ Երևի էլի պատճառ կը բերեն ժամանակի պակասութիւնը. թող պ. Րաֆֆիին առեն այդպիսի բաներ օգուտ քաղելով նորանից, որ Րաֆֆին նկարագրեց նոցա պատկերը առանց նոցա մէջը մտնելու, բայց ոչ այնպիսի մի մարդուն առեն, որը ճանաչում է նրանց, իրանց մերկ իրականութեան մէջ։ Երբ զանազան անձինք նոցանից հայոց լեզու կուսանեն համալսարանի մէջ վաղը մէւս օր այդ լեզուի մագիստրոսութեան քննութիւնը անցնելու համար, թող այդպիսիները գոնէ առանց մագիստրոս լինելու իրանց հայութեան հէնց մի փոքր պարտքը տան ազգին, որ յետոյ էլ կարելի լինի հաւատալ, որ այդ մագիստրոսներից էլ մարդիկ դուրս գան։

Գրիգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բեռլինի «Tageblatt» լրագիրը տպեց իւր համարի ճակատում Լօնդօնից հաղորդված լուրերը, որ իբր թէ Ռուսաստանը գաղտնի բանակցութիւններ ունի Թիւրքիայի հետ, պահանջելով որ Բ. Դուռը զիջանի Ռուսաստանին Թիւրքաց Հայաստանը պատերազմական ծախսերի փոխարէն։ «Порядокъ» լրագիրը ասում է թէ այդ տեսակ սուտ լուրերը ապացոյց են որքան քիչ է ճանաչում Եւրոպան Ռուսաստանին։ Ռուս լրագիրը աւելացնում է թէ այդ լուրերը արդէն հերքեց «Journal de St. Petersbourg» լրագիրը։

—Վիեննայից հաղորդում են որ Բօսնիայում և Հերցեգովինայում ապստամբութիւնը սաստկանում է։

—Փարիզից հեռագրում են որ ֆրանսիական սենատի ձախ կողմը որոշեց վերաքննել սահմանադրութիւնը։

—Գերմանական «National Zeitung» լրագիրը հաւատացնում է որ Հռոմի պապը դիտաւորութիւն ունի թողնել Իտալիա և տեղափոխվել ամբողջ վատիկանով Պրուսիայի Ֆուլդա քաղաքը։ Առաջ պապը դիտաւորութիւն ունէր տեղափոխվել Մալտա կղզու վրայ, որ ինչպէս յայտնի է պատկանում է Անգլիային։

—Գերմանական ռայխստագի բիւջէտի քննութեան ժամանակ իշխան Բիսմարկ առաջարկեց 85,000 մարկ նշանակել պետական տնտեսական խորհուրդ հիմնելու վրայ։ Ռայխստագի ընդդիմադիր կողմը կասկածում է որ այդ տեսակ տնտեսական բարձրագոյն խորհուրդ հաստատելով, իշխան Բիսմարկ կամենում է անդամալուծել գերմանական պարլամենտի ազդեցութիւնն ու նշանակութիւնը։ Երկար վիճաբանութիւններից յետոյ, որոնց մէջ մասնակցեցան բոլոր կուսակցութիւնները, Բիսմարկի առաջարկութիւնը մերժվեցաւ 183 ձայների բազմութեամբ 169 ձայների դէմ։

—Լօնդօնի լրագիրները հաղորդում են որ նոյեմբերի 14-ին Բլէկբօրնի մէջ իւր արտասանած ճառի մէջ մարկիզ Հարտինգտօն խօսեց Իրլանդիայի և արևելեան խնդրի մասին։ Հարտինգտօն ասեց որ եթէ Եւրոպան կամենում է անխախտ պահպանել ընդհանուր խաղաղութիւնը, նա պէտք է ճշգրտութեամբ գործադրի Բեռլինի կոնգրէսի բոլոր յօդուածները։ Եւ ոչ թէ այս կամ այն պետութիւն, բայց ամբողջ Եւրոպան պէտք է վերահսկի Թիւրքիայի վրայ Բեռլինի դաշնագրի ճշդութեամբ կատարվելու վերաբերութեամբ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Օրիորդ Մէրի Ալէն, որը 1876 թուականին քննութիւն տալով դոկտորի աստիճան էր ստացել, այժմ ընտրված է ֆիզիօլոգիայի և առողջապահութեան պրօֆէսոր Վասսար-կօլեջի մէջ Նիւ-Եօրկ նահանգում։ Այդ իգական կօլեջը հիմնվել է 1861 թուականին գարեջուր շինող Վասսարի կտակով թողած 500 հազար դօլար գումարով, որի անունը և կրում է հիմնարկութիւնը։ Կօլեջում ուսանող կանանց թիւը իւրաքանչիւր տարի հասնում է մինչև 400 հոգի։

⁂

Վիեննայում այժմ ցոյց են տալիս զարմանալի երկուորեակներ, Դճակօբ և Բարտիս Դժօսի. Երկուսի միաւորութիւնը սկսվում է կողքից. երկուսն էլ միասին ունեն միայն երկու ոտք և մի փոր։ Նրանցից ամեն մէկը ուտում, խմում, քնում, խօսում և մտածում է առանձին և կարող են մինչև անգամ հիւանդանալ առանց մինը միւսին վնաս տալու։

⁂

Երկրագնտիս վրայ ապրող մարդկանց թիւը հաշւում են 1300 միլիոն։ Ամբողջ մարդկութիւնը կառավարվում է 12 կայսրներով. 25 թագաւորներով. 47 իշխաններով. 17 սուլթաններով, 12 խաներով, 6 մեծ-դուքսերով, 1 փոխարքայով. 1 բէյով և 28 նախագահներով չը հաշւելով փոքրիկ ցեղերի կառավարիչներին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 Նոյեմբերի։ „Прав. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. հոգաբարձական խորհուրդը վճռեց 300,000 րուբլուց 10% տալ այն անձին, որի ցուցմունքներով կը գտնվի Մելնիկովի մօտ կորած այդ գումարը։

ՎԻԵՆՆԱ, 27 Նոյեմբերի։ Թատրոնական հրդեհի հետևանքները սարսափելի են։ Քաղաքը զարհուրած է։ Բօրսան և պարլամենտը փակված են։ 600 աւելի դիակներ կան։ Ամեն տեղ նուիրատուութիւններ են հաւաքվում յօգուտ վնասվածների ընտանիքների։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 Նոյեմբերի։ Հեծելազօրքը վերակազմող մասնաժողովը հիմնված է Օբրուչևի նախագահութեամբ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 Նոյեմբերի։ „Новое Время“ լրագիրը հաղորդում է. լուր է տարածված, որ իշխան Դօնդուկօվ-Կորսակօվ նշանակվում է կովկասեան զինուորական շրջանի զօրքերի հրամանատար և կովկասեան քաղաքական մասի գլխաւոր կառավարիչ։ Գլխաւոր հրամանատարի և փոխարքայի կոչումը ոչնչանում է. մի և նոյն ժամանակ լինելու են հետևեալ փոփոխութիւնները. Ստավրօպօլեան նահանգը և կուբանեան շրջանը անցնում են ներքին գործերի մինիստրի իրաւասութեան տակ, մի և նոյն ժամանակ դրանց սահմաններում եղած զօրքերը կը միանան Խարկովի զինուորական շրջանի հետ։ Չերնօմօրեան շրջանը միանում է կուբանի շրջանի հետ, Սուխումի բաժինը՝ Քութայիսի նահանգի հետ։ Բաթումի բաժինը մտադիր են միացնել Քութայիսի նահանգի հետ, Զաքաթալի շրջանը Թիֆլիսի նահանգի հետ։ Ասում են, որ քաղաքական կառավարութեան կազմակերպութիւնը կը մնայ այն ժամանակ, երբ իշխանը կայցելէ իւրան յանձնված երկիրը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի։ Սպասում են, որ կը հաստատվեն կանոններ օֆիցերների պաշտօնի մասին, որի մէջ կը հաշուեն 1874 թուականին ծառայութիւնը սկսող և այժմ հրաժարական տուած օֆիցերներ, նոյնպէս և նրանք, որոնք 1874 թ. 21 տարեկանից աւելի չեն եղել։ Պօլիցիայի միջոցները Մօսկվայի և Ս. Պետերբուրգի մէջ ընդարձակվում են։ Նիկոլայեվսկայա երկաթուղին առանձին յարմարութիւններ է ձեռք բերում ճանապարհորդների վրայ հսկելու համար։ Պատուաւոր հոգաբարձունները իրանց միջոցներից կամենում են լրացնել Մելնիկովի մօտ կորած 300,000 րուբլը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 Նոյեմբերի։ Նոյեմբերի 30-ին կէսօրից յետոյ ժամի 1-ին դատարանը յայտնեց դատավճիռը Մրօվինսկու, Տեզլեվի և Ֆուրսովի մասին. զրկել նրանց բոլոր իրաւունքներից և աստիճաններից, Մրօվինսկուն զինուորական կոչումից էլ և աքսորել Արխանգելսկ բնակվելու համար, արգելելով հեռանալ այդ տեղից երեք տարւայ ընթացքում։ Այդ դատավճիռը ներթարկել Նորին Մեծութեան հայեցողութեանը։ Դատապաշտպանական ծախսերը դնել դատապարտվածների վրայ։ Մինչև դատավճիռը օրինական ուժ ստանալ յանցաւորներին տնային կալանաւորութեան ենթարկել։ Դատավճիռը վերջնականապէս կը յայտնվի դեկտեմբերի 12-ին։ Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականութեան միջնորդութեան համեմատ այդ նահանգների ընտրական պաշտօնների ցենզը նուազում է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 30 Նոյեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր., երկրորդ 92 ր., երրորդ 90 ր. 75 կ., չորրորդ 91 ր., հինգերորդ 91 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 222 ր. 75 կ., երկրորդ 215 ր. 75 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 25 կ., երկրորդ 90 ր., երրորդ 90 ր., ոսկի 7 ր. 77½ կ.։ Ռուսաց 1 րուբլ Լօնդօնի վրայ արժէ 25,40 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրայ արժէ 217 մարկ 50 պֆ., Փարիզի վրայ 267 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ